ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶԻ ԵՂԵԳԻՍ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Վայոց Ձորի մարզի Եղեգիս համայնք
ՀՀ, Վայոց Ձորի մարզ, ք.Եղեգիս, (0281) 99282, shatin.vayotsdzor@mta.gov.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

09 ՕԳՈՍՏՈՍԻ 2023թվականի N 183Ա

ԱՎԵՏԻՔ ԼՅՈՎԱՅԻ ՎԱՍԻԼՅԱՆԻ ԵՎ ՆՐԱ ԸՆՏԱՆԻՔԻ ԱՆԴԱՄՆԵՐԻՆ ՊԱՏԿԱՆՈՂ ԲՆԱԿԱՎԱՅՐԵՐԻ ՆՇԱՆԱԿՈՒԹՅԱՆ ԲՆԱԿԵԼԻ ԿԱՌՈՒՑԱՊԱՏՄԱՆ ՀՈՂԱՄԱՍԻՆ ԵՎ ԲՆԱԿԵԼԻ ՏԱՆԸ ՀԱՍՑԵ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետով և հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության Կառավարության 29-ը դեկտեմբերի 2005 թվականի թիվ 2387-Ն որոշման դրույթները, կադաստրի կոմիտեի կողմից հաստատված հայտի քաղվածքի 10024GEHZDKU ծածկագիրը

որոշում եմ՝

Եղեգիս համայնքի Թառաթումբ գյուղի բնակիչ Ավետիք Լյովայի Վասիլյանի (ընտանիքի գլխավորը) և նրա ընտանիքի անդամներ՝ Յուղաբեր Ռազիկի Վասիլյանի (կինը), Մուրադ Ավետիքի Վասիլյանի (որդին), Լյովա Ավետիքի Վասիլյանի (որդին) սեփական բնակավայրերի նշանակության բնակելի կառուցապատման հողամասին և բնակելի տանը (կադաստրային ծածկագիր՝ 10-024-0023-0006, մակերեսը՝ 0,166 հա) տրամադրել Եղեգիս համայնք, Թառաթումբ գյուղ, 11-րդ փողոց, տուն 11 հասցեն:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ **ԱՐԹՈՒՐ ՍՏԵՓԱՆՅԱՆ**

2023 թ. օգոստոսի 9
հ.Եղեգիս

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶԻ ԵՂԵԳԻՍ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Վայոց Ձորի մարզի Եղեգիս համայնք
ՀՀ, Վայոց Ձորի մարզ, ք.Եղեգիս, (0281) 99282, shatin.vayotsdzor@mta.gov.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

09 ՕԳՈՍՏՈՍԻ 2023թվականի N 184 Ա

ԵՂԵԳԻՍ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ 15-Ը ՄԱՐՏԻ 2018 ԹՎԱԿԱՆԻ ԹԻՎ 48Ա ՈՐՈՇՄԱՆ ՀԱՎԵԼՎԱԾ 1-Ը ՆՈՐ ԽՄԲԱԳՐՈՒԹՅԱՄԲ ՇԱՐԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետով, «Նորմատիվ իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 33-րդ հոդվածի 1-ին մասի 3)-րդ կետով, հիմք ընդունելով Եղեգիս համայնքի ավագանու 23-ը հունիսի 2023 թվականի թիվ 87Ա որոշումը, Հայաստանի Հանրապետության Վայոց ձորի մարզպետի 17-ը հունվարի 2022 թվականի N 01/08.2/0298-2022 գրությունը

որոշում եմ՝

Եղեգիս համայնքի ղեկավարի 15-ը մարտի 2018թ. «Եղեգիսի համայնքապետարանի աշխատակազմի համայնքային ծառայության մրցութային և ատեստավորման հանձնաժողովների նոր կազմը, հանձնաժողովների աշխատակարգերը հաստատելու, հանձնաժողովի նիստերի տեխնիկական սպասարկման համար լիազորված անձ նշանակելու մասին» թիվ 48 Ա որոշման հավելված 1-ը շարադրել նոր խմբագրությամբ՝ համաձայն սույն որոշման կից հավելվածի:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ **ԱՐԹՈՒՐ ՍՏԵՓԱՆՅԱՆ**

2023 թ. օգոստոսի 9
հ.Եղեգիս

Հավելված

Եղեգիս համայնքի ղեկավարի

09-ը օգոստոսի 2023թ. N 184 Ա որոշման

Եղեգիսի համայնքապետարանի աշխատակազմի համայնքային ծառայության մրցութային և ատեստավորման հանձնաժողովի կազմը՝

Հ/Հ	Անուն, Ազգանուն,Հայրանուն	Պաշտոնը	Պաշտոնը հանձնաժողովի կազմում
1	Արթուր Ստեփանյան Կամոյի	համայնքի ղեկավար	հանձնաժողովի նախագահ
2	Նարինե Մաղաքյան Հենրիկի	ՀՀ Վայոց Ձորի մարզպետի աշխատակազմի աշխատակից	հանձնաժողովի անդամ
3	Ռուզաննա Հախվերդյան Արարատի	ՀՀ Վայոց Ձորի մարզպետի աշխատակազմի աշխատակից	հանձնաժողովի անդամ
4	Վարդան Հովհաննիսյան Վիկտորի	ՀՀ Վայոց Ձորի մարզպետի աշխատակազմի աշխատակից	հանձնաժողովի անդամ
5	Հրաչյա Պողոսյան Ձիվանի	Եղեգիս համայնքի ավագանու անդամ	հանձնաժողովի անդամ
6	Ձոյա Մարտիրոսյան Հայրիկի	Եղեգիս համայնքի ավագանու անդամ	հանձնաժողովի անդամ
7	Նարեկ Մարտիրոսյան Արզումանի	Եղեգիս համայնքի ավագանու անդամ	հանձնաժողովի անդամ
8	Արտուշ Հակոբյան Աշոտի	Եղեգիս համայնքի ավագանու անդամ	հանձնաժողովի անդամ
9	Արգիշտի Նազարյան Սահակի	Եղեգիս համայնքի ավագանու անդամ	հանձնաժողովի անդամ

Եղեգիս համայնքի ղեկավար Արթուր Ստեփանյան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶԻ ԵՂԵԳԻՍ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Վայոց Ձորի մարզի Եղեգիս համայնք
ՀՀ, Վայոց Ձորի մարզ, ք.Եղեգիս, (0281) 99282, shatin.vayotsdzor@mta.gov.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

09 ՕԳՈՍՏՈՍԻ 2023թվականի N 185 Ա

ԵՂԵԳԻՍ ՀԱՄԱՅՆՔԻ ՎԱՐՉԱԿԱՆ ՍԱՀՄԱՆՆԵՐՈՒՄ ԳՏՆՎՈՂ ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ՀՈՂԱՏԵՍՔԵՐԸ ԱՃՈՒՐԴՈՎ ՕՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով 27-ը հուլիսի 2023թ. արձանագրությունները հողամասի՝ աճուրդով վաճառքի արդյունքների մասին, Եղեգիս համայնքի ավագանու 24/03/2023թ. թիվ 33Ա, 21/04/2023թ. թիվ 53Ա որոշումները, ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 16-րդ, 24-րդ կետերով և Հայաստանի Հանրապետության «Հողային օրենսգրքի» 70-րդ հոդվածի 2-րդ կետի պահանջներով, ***որոշում եմ՝***

1.Հայաստանի Հանրապետության Վայոց ձորի մարզի Եղեգիս համայնքի Շատին գյուղի վարչական սահմաններում գտնվող համայնքային սեփականություն հանդիսացող արդյունաբերության, ընդերքօգտագործման և այլ արտադրական նշանակության օբյեկտների հողեր նպատակային նշանակության, գործառնական նշանակությունը գյուղատնտեսական արտադրական օբյեկտներ հողատեսքը (կադաստրային ծածկագիր 10-035-0231-0059, մակերեսը 0.58324հա) 1 333 815 (մեկ միլիոն երեք հարյուր երեսուներեք հազար ութ հարյուր տասնհինգ) ՀՀ դրամով վաճառել Շատին գյուղի բնակչուհի Սվետլաննա Սլավիկի Սարգսյանին:

2.Հայաստանի Հանրապետության Վայոց ձորի մարզի Եղեգիս համայնքի Աղնջաձոր գյուղի վարչական սահմաններում գտնվող համայնքային սեփականություն հանդիսացող բնակավայրերի նշանակության բնակելի կառուցապատման հողատեսքը (կադաստրային ծածկագիր 10-007-0017-0064, մակերեսը 0.15006հա) 335374 (երեք հարյուր երեսունհինգ հազար երեք հարյուր յոթանասունչորս) ՀՀ դրամով վաճառել Աղնջաձոր գյուղի բնակիչ Արթուր Վալերիկի Սիմոնյանին:

3.Անշարժ գույքերը օտարելու համար օրենքով սահմանված ժամկետում և կարգով կնքել օտարման պայմանագրեր:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ **ԱՐԹՈՒՐ ՍՏԵՓԱՆՅԱՆ**

2023 թ. օգոստոսի 9
հ.Եղեգիս

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶԻ ԵՂԵԳԻՍ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Վայոց Ձորի մարզի Եղեգիս համայնք
ՀՀ, Վայոց Ձորի մարզ, ք.Եղեգիս, (0281) 99282, shatin.vayotsdzor@mta.gov.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

09 ՕԳՈՍՏՈՍԻ 2023թվականի N 186 Ա

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ ԿՈՂՄԻՑ ՏՐՎԱԾ 26-Ը ՄԱՅԻՍԻ 2023Թ. ԹԻՎ 135Ա ՈՐՈՇՄԱՄԲ ՏՐՎԱԾ ՇԻՆԱՐԱՐՈՒԹՅԱՆ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅԱՆ ՍԱՀՄԱՆՎԱԾ ՇԻՆԱՐԱՐՈՒԹՅԱՆ ԺԱՄԿԵՏԸ ԵՐԿԱՐԱՁԳԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետի, Հայաստանի Հանրապետության Կառավարության 2015թ. մարտի 19-ի N 596-Ն որոշման 124-րդ կետի պահանջներով

որոշում եմ՝

1.Հիմք ընդունելով «Մարտիրոսյան ՇԻՆ» ՍՊԸ-ի տնօրենի գրությունը՝ համայնքի ղեկավարի 26/05/2023թ. թիվ 135Ա որոշման 1-ին մասով տրված շինարարության թույլտվության սահմանված շինարարության ժամկետը երկարաձգել մեկ ամիս ժամկետով:

2.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ **ԱՐԹՈՒՐ ՍՏԵՓԱՆՅԱՆ**

2023 թ. օգոստոսի 9
հ.Եղեգիս